ՕՐՕՐՈՑԱԳՈՂ [1]

(Ժողովրդական առասպել)

ՑՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Կէս գիշերին մութ խրճիթում
Մայրը լսեց մի խորդիւն,
Եւ վեր թռաւ ահը սրտում,
Նայեց քնած իւր որդուն։

Մի արարած սև ու խաւար
Նա նըկատեց սրտաղող,
Եւ ճանաչեց սարսափահար
Օրօրոցի մի չար գող,

Որ զաւակի բուգը բռնած
Խեղտում էր սև ճանկերում,
Եւ երեխան աչքերը բաց
Զարչարում էր ու հևում։

Խելակորոյս իսկոյն և եթ
Վրայ թռաւ կատաղի,

---

[1]) Հայոց գիւղերում ընդունուած է գոյութիւնը մի չար ոգու, որի պաշտօնն է—գիշերը, մեծերի քնած ժամանակ խեղդել տղայ երեխաներին օրօրոցում կամ փոխել տեղը մի դև դնելով։ Զանազան գաւառներում այլ և այլ անուններ ունի այս դևը։ Լօռի կոչում է օրօրոցագող։

Եւ բռնեցան իրարու հետ
Օրրանի մօտ երեխի։

Կէս գիշերին մութ խրճիթում
Կիսակենդան մանուկին
Իրարից խլել են աշխատում
Մնոց մայրն ու չար ոգին։

Կռիւ են տալիս.—նախատում են,
Եւ կրծում են և թրքում,
Իրար սեղմում և խեղդում են,
Ճանկռում, ծեծում, ապտակում։

Եւ մայրական անհուն սէրը
Ոյժ էր տալիս գերբնական...
Եւ ուժասպառ, յաղթուած չարը
Թողեց օրրանը մանկան։

1893 թ. փետրուարի 1.